ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВОХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР
ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА

CJsC NATIONAL CENTER OF ONCOLOGY
named after V. A. FANARJIAN

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ. 76

ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76

76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

Հեռ. (+374 10) 20-94-02

№ 01/10-160
«23» 03 2021

«ՍՈՒՊՐԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ս. ՄԻՆԱՍՅԱՆԻՆ
ՀՀ, ք. Կապան, Հ. Ավետիսյան փ
sevakminasyan93@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և «ՍՈՒՊՐԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) միջև 2020 թվականի հոկտեմբերի 14-ին կնքվել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման թիվ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-20/89 պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի Հավելված 1-ով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը, այնուհետև երկարաձգվել 30 օրացուցային օրով՝ մինչև 2021 թվականի հունվարի 25-ը, սակայն ծառայությունը Ընկերության կողմից պատշաճ չի մատուցվել:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն կետի «բ» ենթակետի համաձայն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիարատուն միակողմանի հրաժարվում է 2020 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված թիվ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-20/89 պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակվել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ գնումների բաժին
Ա. Եղիազարյան
Հեռ.՝ 010287681